ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 2

2019թ.-ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ---------- 3

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ---------- 4

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----------7

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ- 13

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ---------- 14

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ՁԵՎԱՎՈՐՈՒՄ---------- 18

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ---------- 22

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳԱՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ---------- 23

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋ---------- 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը, որպես «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմին, ստեղծվել է ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 2-ին 734-Ն որոշմամբ, գործունեությունն սկսել է նույն թվականի հոկտեմբերի 9-ից:

Որպես Գործակալության գործունեության թափանցիկության եւ հրապարակայնության երաշխիք՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը նախատեսել է, որ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը «տարեկան մեկ անգամ ներկայացնում է հրապարակային հաշվետվություն՝ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի եւ նախորդ տարվա գործունեության վերաբերյալ»:

Այս հաշվետվությունը Գործակալության գործունեության 4-րդ ամբողջական տարվա՝ 2019 թվականի կատարած աշխատանքների հանրային հաշվետվությունն է, որում ներկայացված են անձնական տվյալների պաշտպանության ոլորտի հիմնական հիմնախնդիրների եւ մարտահրավերների լուծմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաեւ մի շարք համեմատություններ գործունեության նախորդ տարիների ցուցանիշների եւ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում տիրող վիճակի հետ:

2019թ.-ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը 2019թ.-ին առաջնորդվել է իր ընդունած հնգամյա գործողությունների ծրագրով (2018-2022թթ. համար): Այդ փաստաթուղթը ներկայացնում է Գործակալության տեսլականն անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իր գործունեության, ինչպես նաեւ Գործակալության կարողությունների զարգացման վերաբերյալ: Հիմնվելով հնգամյա գործողությունների ծրագրի վրա՝ Գործակալությունը նախանշել էր 2019թ.-ի իր հետեւյալ առաջնահերթությունները.

- Անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող, փոփոխվող եւ արդեն գործող իրավական ակտերի վերաբերյալ կարծիքների տրամադրում, վերլուծություն, օրենսդրական փոփոխություններին միտված նախաձեռնություններ, ինչը ներառում է նաեւ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրումը:

- Ապահովել, որ պետական կառավարման բոլոր կենտրոնական մարմինները մշակեն, ընդունեն եւ հրապարակեն Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի դրույթներին համապատասխանող անձնական տվյալների մշակման կարգեր՝ հաշվի առնելով անձնական տվյալների մշակման իրենց առանձնահատկությունները:

- Գործակալության աշխատողներից առնվազն 2-ի համար ապահովել ուսուցում տեղեկատվական անվտանգության ոլորտում՝ միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկացմամբ (ԵՄ ֆինանսավորմամբ):

- Իրականացնել մշտական հանրային իրազեկման արշավներ, ծրագրեր անձնական տվյալների պաշտպանության իրավունքի մասին մարդկանց իրազեկելու նպատակով (մասնակցել թեմատիկ հեռուստա եւ ռադիոհաղորդումների, ներկայացված լինել տպագիր եւ առցանց մամուլում, ներկայացված լինել սոցիալական ցանցերում, հրապարակել տեղեկատվական եւ ուսուցողական նյութեր: Մշակել եւ հրապարակել ընտրված ոլորտներում առնվազն ուղեցույց (փափուկ իրավունքի ձեւավորում), իրականացնել ուսուցումներ անձնական տվյալներ մշակողների եւ լայն հասարակության, ներառյալ՝ երեխաների համար: Իրականացնել ուսուցումներ պետական մարմինների աշխատակիցների համար:

- Իրականացնել մարդկանց լայն շրջանակներին վերաբերող անձնական տվյալներ մշակողների՝ անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող գործունեության մոնիթորինգ: Իրականացնել վարչական վարույթների իրականացում ըստ դիմումների, ինչպես նաեւ Գործակալության նախաձեռնությամբ: Պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ անձնական տվյալների փոխանցման համապատասխանության ստուգում Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի պահանջներին:

- Հաշվետվողականության ապահովում. Մամուլով եւ սոցիալական ցանցերով հրապարակել հանրային հաշվետվություններ կատարած աշխատանքի վերաբերյալ՝ ինչպես կոնկրետ գործերով, այնպես էլ ընդհանուր միտումները ներկայացնելով: Ներկայացնել տարեկան հանրային հաշվետվություն նախորդ տարվա գործունեության եւ վիճակի վերաբերյալ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն՝ «3. Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ (...), կատարում է հետազոտություններ և մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տալիս տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին.»: Դրանով պայմանավորված՝ 2019թ.-ի ընթացքում բազմաթիվ քաղաքացիներ, կազմակերպություններ, պետական մարմիններ դիմել են Գործակալությանը՝ խորհրդատվություն ստանալու համար: 2019թ.-ին Գործակալությունը տրամադրել է 261 խորհրդատվություն, որից 108-ը՝ քաղաքացիների՝ 47-ը՝ իրավաբանական անձանց, 101-ը՝ պետական մարմինների, 4-ը՝ ՀԿ-ների եւ 1-ը՝ փաստաբանի:

Աղյուսակ 1. Դիմողները



Տրամադրված 261 խորհրդատվությունից 201-ը եղել են բանավոր, 60-ը՝ գրավոր:

Աղյուսակ 2. Խորհրդատվության ձեւը



Դիմողներին տրամադրվել է խորհրդատվություն հիմնականում հետևյալ թեմաներով.

- Պետական կառավարման համակարգի մարմինների աշխատողների պարգեւատրման վերաբերյալ ՀԵՏՔ-ի, ինչպես նաեւ այլ դիմողների հարցումների հիման վրա տեղեկություններև տրամադրելու եւ հրապարակելու վերաբերյալ № 02/10.2/8474-2019 հանձնարարականի կատարման ընթացքի վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (General Data protection Regulation (GDPR) վերաբերյալ
- Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- GetContact ծրագրից օգտատիրոջ տվյալները հեռացնելու վերաբերյալ
- Անձնական տվյալներ մշակողների կողմից Գործակալությանը ծանուցում ներկայացնելու վերաբերյալ
- Գործակալության կողմից հրապարակված ուղեցույցների վերաբերյալ
- Անձնական տվյալները երրորդ պետության փոխանցելու և անձնական տվյալների բավարար պաշտպանության մակարդակ ունեցող երկրիների ցանկի վերաբերյալ
- Առաջին դասարանցիների ընդունելության համար անհրաժեշտ ԿԳՆ կողմից սահմանված փաստաթղթերի ցանկի վերաբերյալ
- Անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելու վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ
- Datalex համակարգում անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ
- Գործատուի կողմից մատնահետքի միջոցով աշխատակցի մուտք ու ելքի հսկման վերաբերյալ
- Տվյալների փոխկապակցման վերաբերյալ
- Տեսահսկում իրականացնելու վերաբերյալ
- Համացանցում կեղծ (fake) էջերը հեռացնելու վերաբերյալ
- Պետական կառույցների հարցմամբ (քննչական կոմիտե, դատարան և այլն) անձնական տվյալների տրամադրման վերաբերյալ
- Ապահովագրական ընկերությունների կողմից անձնական տվյալների մշակման վերաբերյալ
- Կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակման վերաբերյալ
- Աշխատակիցների պարգևավճարների ցանկի հրապարակման վերաբերյալ
- և այլն:

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարչական վարույթներ

2019թ.-ի ընթացքում Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունում քաղաքացիների դիմումների հիման վրա կամ Գործակալության նախաձեռնությամբ հարուցվել է **83 վարչական վարույթ**: Համեմատության համար պետք է նշել, որ Գործակալության ստեղծումից ի վեր՝ 2015-2018 թվականների ընթացքում միասին հարուցվել է 67 վարույթ՝ 16-ով քիչ, քան միայն 2019 թվականին:



Առհասարակ, վարույթների թիվն ամեն տարի աճում է. այսպես, 2015 թվականին հարուցվել է 2 վարույթ, 2016-ին՝ 11 վարույթ, 2017-ին՝ 21 վարույթ, 2018-ին՝ 33 վարույթ եւ 2019-ին, ինչպես նշեցինք, 83 վարույթ:

2019 թվականին հարուցված վարույթների էական մասը (ավելի քան 50 վարույթ), վերաբերել է ոչ թե կոնկրետ անձի տվյալների մշակման իրավաչափությանը, այլ անձնական տվյալներ մշակող պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կամ իրավաբանական անձանց կողմից անձնական տվյալների մշակման իրավաչափությանը (օրինակ, այդպիսի վարույթներ են «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ի կողմից ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում Գործակալության նախաձեռնությամբ հարուցված վարույթները): Այս վարույթների

ընթացքում ոչ թե որոշվում է, թե արդյոք անձնական տվյալների մշակմամբ խախտվել է կոնկրետ մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, այլ պարզվում է՝ արդյոք անձնական տվյալներ մշակող այս կամ այն մարմինը իրավունք ունի մշակել այն տվյալը, որի մշակման հայտ է ներկայացրել կամ արդյոք անձնական տվյալների ակնկալվող մշակումը կհամապատասխանի օրենքին: Ստորեւ ներկայացնում ենք 2019 թվականին իրականացված վարչական վարույթներով կայացված որոշումներով Գործակալության արտահայտած այն դիրքորոշումները, որոնք էական կարող են լինել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի մեկնաբանության համար: Ընդ որում, վարույթներով կայացված որոշումների մասին տեղեկությունները ներկայացվում են Գործակալության՝ իր գործունեության ընթացքում իրեն վստահված կամ հայտնի դարձած անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելու պարտականությունը հաշվի առնելով:

1. Անձնական տվյալ-անձնական կյանքի գաղտնիք

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացրած գրության առիթով Գործակալությունը 2019 թվականի հունվարին վարույթ էր հարուցել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից պարգևատրված աշխատակիցների ցանկը՝ նշելով յուրաքանչյուրին տրված պարգևավճարի չափը հրապարակելու դեպքում անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին ստուգելու համար («Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հրապարակել է Գործակալության որոշումն իր կայքում հետեւյալ հղմամբ՝ http://www.foi.am/u_files/file/Voroshum_2019_qaghaqapetaran.pdf):

Այս վարույթով Գործակալությունը նշել էր, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը կամ փոխանցումը, չի սահմանում պետական մարմնի կողմից անձնական տվյալներ տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ չի սահմանում այս կամ այն անձնական տվյալների՝ գաղտնիք լինելու կարգավիճակը, ինչից հետեւում է, որ որոշակի հարաբերությունները կամ կոնկրետ մարմնի գործունեությունը կամ կոնկրետ իրավահարաբերությունը կարագավորող օրենքներով կարող են ուղղակիորեն սահմանվել այս կամ այն անձնական տվյալի փոխանցման (այդ թվում՝ հրապարակման) թույլտվություն կամ արգելք: Նման դիրքորոշման Գործակալությունը հանգել էր՝ համադրելով ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 34-րդ հոդվածները: Ըստ էության, այս վարույթով Գործակալությունը գտել էր, որ անձնական տվյալն ինքին գաղտնիք չէ, եւ անձնական տվյալների մշակման սկզբունքները եւ կանոնները սահմանող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում

անձնական տվյալները չեն նույնանում գաղտնիքի հետ (այսպես, անձնական տվյալները կարող են լինել նաեւ հանրամատչելի):

Նույն վարույթով Գործակալությունը նաեւ նշել էր, որ վերոնշյալ դիրքորոշումը չի նշանակում, որ անձնական տվյալները չեն կարող համարվել կամ դառնալ այնպիսին կամ մշակվել այնպես, որ խախտեն մարդու մասնավոր (անձնական) կյանքի անձեռնմխելիության կամ անձնական կյանքի հարգանքի իրավունքը: Ավելին, հաճախ անձնական տվյալների մշակումը կարող է վկայել անձնական կյանքին միջամտության եւ անգամ անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման մասին: Արդյունքում, Վարույթով ըստ էության անդրադառնալով գործատուի կողմից աշխատողի անձնական տվյալների հրապարակման հարցին՝ Գործակալությունը նաեւ դիրքորոշում էր հայտնել, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործատուի կարգավիճակից, աշխատողի կարգավիճակից, աշխատողի տվյալները պահանջողի կարգավիճակից կամ փոխանցման դեպքից, պետք է վերհանել վերաբերելի օրենսդրությունը և պարզել՝ արդյոք տվյալ դեպքում օրենքով սահմանված է գործատուի իրավունքը կամ պարտականությունը հրապարակելու աշխատողի անձնական տվյալները, թե սահմանված չէ, և պետք է առաջնորդվել աշխատողի համաձայնությամբ:

2. Անձնական տվյալների պաշտպանությունը եւ տեղեկատվության ազատությունը

2019 թվականի ընթացքում իրականացված վարույթներով Գործակալությունը անդրադարձել էր նաեւ տեղեկատվության ազատության իրավունքին: Այսպես, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության, ինչպես նաեւ Հանրային հեռուստաընկերության Լրատվական ծառայության ներկայացրած գրությունների առիթով Գործակալությունը համապատասխանաբար 2019 թվականի օգոստոսին եւ հոկտեմբերին երկու տարբեր վարույթներով անդրադարձել էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակում անձնական տվյալների մշակմանը: Վարույթներով Գործակալությունն արձանագրեց, որ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն անձնական տվյալների մշակում նախատեսող օրենք է:** Ըստ այդմ, Գործակալությունը, որպես անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին, վարույթներով անդրադարձել էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին այնքանով, որքանով այդ օրենքը վերաբերում էր անձնական տվյալների մշակմանը եւ գտել, որ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան անձնական տվյալներ հրապարակելը կամ հարցման հիման վրա հարցմամբ դիմողին տրամադրելը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին:**

3. Լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակումը

2019 թվականի ընթացքում երեք անգամ Գործակալությունն առիթ է ունեցել քաղաքացիների դիմումների հիման վրա ստուգել լրատվամիջոցների կողմից անձնական տվյալների մշակման իրավաչափությունը:

Ընդ որում, երկու վարույթով խոսքը գնում էր լրատվամիջոցներով մարդկանց տվյալների այնպիսի հրապարակման մասին, որից այդ անձինք տեղյակ չէին: Այս երկու վարույթների ընթացքում լրատվամիջոցները, հաշվի առնելով դիմողների պահանջները եւ փաստարկները, ապանձնավորեցին նրանց տվյալները (հեռացրեցին հրապարակումներից նույնականացնող տվյալները) եւ ըստ էության կատարեցին դիմումատուների պահանջները: Ուստի, Գործակալությունը վարույթները կարճեց՝ առանց ըստ էության քննության առնելու դիմողների պահանջները:

Այդուհանդերձ, վարույթների հանգամանքներն ընդունելով որպես առիթ՝ Գործակալությունն անդրադարձավ լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակման առանձնահատկություններին. այսպես, Գործակալությունը, հաշվի առնելով, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անձնական տվյալների օրինական մշակման հիմքերն են **համաձայնությունը**, կամ համաձայնության բացակայության դեպքում մշակումն **ուղղակիորեն օրենքով նախատեսված լինելը,** կամ տվյալները **հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը, նշեց**, որ կախված լրագրողական նյութի ժանրից, նպատակից եւ ֆորմատից՝ լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակման հիմք կարող է հանդիսանալ օրենքով նախատեսված հիմքերից յուրաքանչյուրը՝ **եւ անձի համաձայնությունը** (օրինակ, հարցազրույցի դեպքում), եւ **հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը** (օրինակ, վերլուծության դեպքում), եւ **օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը**:

Հաշվի առնելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով, Սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով լրագրության սկզբունքների նախանշած կանոնները՝ Գործակալությունը դիրքորոշում հայտնեց, որ անձնական տվյալների մշակման եւ մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն տարածելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է, որ լրատվամիջոցը (լրագրողը) սահմանի տվյալների մշակման նպատակ եւ գնահատի՝ արդյո՞ք առկա է հանրային այնպիսի շահ, որի պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ստորադասել մարդու անձնական տվյալների պաշտպանության շահը եւ մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն տարածել: Միաժամանակ, սահմանված նպատակը պետք է լինի որոշակի եւ օրինական, այսինքն՝ հանրային շահի պաշտպանությունը պետք է ոչ թե պատրվակ լինի, այլ պետք է

իրականում արտացոլի տարածվող տեղեկության (տվյալ դեպքում՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկության) սոցիալական անհրաժեշտությունը եւ կարեւորությունը, իսկ հրապարակվող անձնական տվյալները պետք է լինեն սահմանված նպատակին համաչափ՝ լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր, մշակվեն այն քանակով, որն անհրաժեշտ է սահմանված նպատակին հասնելու համար, եւ պետք է բացառվի այն տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ:

4. Մոռացված լինելու իրավունք

Ինչպես նշեցինք՝ 2019 թվականի ընթացքում Գործակալությունը քաղաքացիների դիմումների հիման վրա լրատվամիջոցների կողմից անձնական տվյալների մշակմանն անդրադարձել է երեք վարույթով, այնինչ ներկայացրեցինք երեք վարույթներից միայն երկուսով Գործակալության հայտնած դիրքորոշումը:

Լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակմանը վերաբերող երրորդ վարույթը նույնպես քաղաքացու դիմումի հիման վրա էր, սակայն այս դեպքում քաղաքացու անձնական կյանքի տվյալները մի քանի տարի առաջ հենց ինքն էր ներկայացրել առցանց լրատվամիջոցի լրագրողին՝ հարցազրույցի ընթացքում. արդյունքում այդ տվյալները հրապարակվել էին եւ արտատպվել այլ առցանց լրատվամիջոցների կողմից, հայտնվել այլ կայքերում: Բնականաբար, հրապարակումից մի քանի տարի անց նույնպես քաղաքացու տվյալները հասանելի էին համացանցում՝ այդ թվում որոնողական համակարգերի միջոցով քաղաքացու անունը եւ ազգանունը որոնելիս:

Գործակալությանը դիմելով՝ քաղաքացին չէր վիճարկել նախկինում իր տվյալների հրապարակման իրավաչափությունը, քանի որ դրանք հրապարակվել էին իր համաձայնությամբ, սակայն հայտնել էր, որ այդ տվյալների հրապարակայնությունը միջամտում է իր կյանքին եւ ակնկալում էր, որ վարույթի արդյունքում իր տվյալները կհեռացվեն, կջնջվեն կայքերից՝ իր անձնական կյանքի տվյալներ անհասանելի դարձնելով որոնողական համակարգերի համար: Ըստ էության, քաղաքացին ցանկանում էր օգտվել **մոռացված լինելու իրավունքից** (այս իրավունքը կոչվում է նաեւ՝ **վիրտուալ մահվան իրավունք** կամ **ջնջվելու իրավունք** կապված է համացանցում անձնական տվյալների հասանելիության առանձնահատկությունների հետ): Այս վարույթը նույնպես կարճվեց, քանի որ լրատվամիջոցները հեռացրեցին քաղաքացու անձնական տվյալներ պարունակող հրապարակումը կամ ապանձնավորեցին քաղաքացու տվյալները՝ նրան անհասանելի դարձնելով որոնողական համակարգերով որոնման համար: Սակայն վարույթի հանգամանքներն ընդունելով որպես առիթ՝ Գործակալությունն անդրադարձավ մոռացված լինելու իրավունքին:

Մոռացված լինելու իրավունքի հիմքում ընկած է Եվրամիության դատարանի (Court of Justice of the European Union, այսուհետ՝ ԵԴ) 2014թ. մայիսի 13-ի C-131/12 որոշումը: Նշված որոշման նախապատմությունը հետեւյալն է. 1998թ.-ին իսպանական La Vanguardia պարբերականը մի նյութ էր հրապարակել Իսպանիայի քաղաքացի Մարիո Կոստեխա Գոնսալեզի մասին, որում տեղեկություններ էին նրա հարկային պարտավորությունների մասին: 2010թ.-ին Գոնսալեզը դիմել էր Իսպանիայի Տվյալների պաշտպանության գործակալությանը՝ պահանջելով, որ պարբերականն իր կայքից հեռացնի վերոնշյալ նյութը, կամ տեխնիկապես անհնար դարձնի այդ տվյալների ի հայտ գալը որոնողական համակարգերում: Գոնսալեզի համար այն էր խնդրահարույց, որ որոնողական համակարգով իր անունը փնտրելիս ամեն անգամ ի հայտ էր գալիս այդ հրապարակումը, որում առկա տվյալներն այլեւս արդիական չէին, քանի որ նա վաղուց մարել էր իր հարկային պարտավորությունները: Այսպիսով, Իսպանիայի քաղաքացուն վատ լույսի ներքո ներկայացնող տեղեկությունները, որոնք հրապարակվել էին լրագրողական նպատակով եւ իրավաչափորեն, տարիներ անց կորցրել էին իրենց արդիականությունը, բայց շարունակում էին բացասաբար ազդել նրա վրա: Գոնսալեզի գործի արդյունքում **ԵԴ-ն իր որոշմամբ հաստատել է մարդու՝ մոռացված լինելու իրավունքը:**

Այս վարույթով արտահայտած դիրքորոշմամբ Գործակալությունը հաշվի էր առել մի կողմից համացանցում տվյալների հասանելիության առանձնահատկությունները (առանց ժամանակի եւ տարածության սահմանափակման), մյուս կողմից հաշվի էր առել լրագրողների բացառիկ դերը ժողովրդավարական հասարակություններում, նրանց կարեւորությունը հանրային շահի սպասարկման գործում, եւ գտել, որ անհրաժեշտ է հաշվի առնել մոռացված լինելու իրավունքն այն դեպքերում, երբ մի կողմից **սպառվել է տվյալ հաղորդման նպատակը, հանրային նշանակությունը (**որպես կանոն երբ նյութի հրապարակումից որոշակի ժամանակ է անցել), մյուս կողմից **ոչ արդիական տեղեկությունները շարունակում են միջամտել մարդու անձնական կյանքի իրավունքին** (անձը դիմել է եւ հայտնել է այդ մասին)**:** Գործակալությունը գտել էր, որ վարույթով քաղաքացու բարձրացված հարցի հիմնական լուծումն ամեն դեպքում գտնվում է լրագրողական բարեխղճության (էթիկայի) դաշտում եւ առաջարկել էր որպես ինքնակարգավորման մեխանիզմ սահմանել կառուցակարգեր, որոնց շրջանակներում հնարավոր կլինի ապահովել մարդու մոռացված լինելու իրավունքը, այն է՝ **հաղորդման նպատակին հասնելուց հետո**, **անձի դիմումի հիման վրա** սահմանափակել (անհնար դարձնել) **անձնական կյանքի իրավունքին միջամտող** տեղեկություններ պարունակող հրապարակման կամ դրա համապատասխան հատվածի մատչելիությունն այն հարթակներում, որոնք գտնվում են լրատվամիջոցի տնօրինության տակ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

2019 թվականի ընթացքում Գործակալությունը շարունակել է տրամադրել կարծիքներ եւ պարզաբանումներ անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաեւ՝ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ: 2019 թվականին՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի գործողության 5-րդ տարում արդեն պարզ էր, որ անձնական տվյալների մշակում նախատեսող ինչպես նոր ընդունվող իրավական ակտերի նախագծերում, այնպես էլ արդեն գործող իրավական ակտերում պատշաճ արտացոլված չէին անձնական տվյալների մշակման սկզբունքները. այլ կերպ ասած, տարբեր իրավական ակտերով նախտեսվում կամ արդեն նախատեսված է անձնական տվյալների այնպիսի մշակում, որը չի համապատասխանում անձնական տվյալների մշակման սկզբունքներին:

Այս խնդիրն արտացոլվել է նաեւ ՀՀ կառավարության՝ 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում, որտեղ, ի թիվս այլնի, նախատեսված է անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող իրավական ակտերի համապատասխանեցում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին:

Խնդրի առավել արդյունավետ լուծման նպատակով 2019 թվականին Գործակալության միջնորդությամբ համապատասխան շրջաբերական է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության ստորաբաժանումներին, ենթակա մարմիններին եւ նախարարության համակարգում գործող հիմնարկներին՝ իրենց կողմից մշակվող կամ իրենց ներկայացված եւ անձնական վյալների մշակում նախատեսող իրավական ակտերի նախագծերը Գործակալության կարծիքին ներկայացնելու վերաբերյալ:

Ըստ այդմ, 2019 թվականի ընթացքում Գործակալությունը տրամադրել է ավելի քան **70 գրավոր կարծիք** իրավական ակտերի (տարբեր գերատեսչությունների կողմից մշակված օրենքների եւ ենթաօրենսդրական ակտերի), ինչպես նաեւ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ

Հանրային իրազեկման գործառույթը Գործակալությունն իրականացրել է երեք հիմնական եղանակով՝ հրապարակումներ լրատվամիջոցներով, քննարկումներ եւ ուսուցումներ:

Հրապարակումներ լրատվամիջոցներով

Գործակալության նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ լրատվամիջոցներով հրապարակվել է 12 հանրային ելույթ և հարցազրույց.

- Ելույթ «ArmIGF»՝ Տվյալների տեղայնացում. ավանդական թե ամպային մոտեցում
- Ելույթ «YouthIGF»՝ Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Iravaban.net» կայք՝ Պետաշխատողների պարգեվավճարների ցանկի հրապարակման վերաբերյալ հարցազրույց
- «Հանրային հեռուստաընկերություն», «Առավոտ լուսո» ծրագիր՝ GetContact հավելվածի հետ կապված խնդիրների ու անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Factor.am» կայք՝ Երևանի քաղաքապետի կողմից պարգեվավճարների ցանկի հրապարակման հետ կապված հարցազրույց

- «Հանրային հեռուստաընկերություն», առավոտյան ծրագիր՝ Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Հրապարակ» հաղորդում՝ Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Արմենիա» հեռուստաընկերություն, «Բարի լույս» հաղորդում ՝ Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Հետք» խմբագրություն՝ երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Iravaban.net» կայք՝ հարցազրույց օնլայն գնումներ կատարելիս անձնական տվյալների պաշտպանության հավանական վտանգների մասին

- «Iravaban.net» կայք՝ հարցազրույց անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Հայկական ժամանակ» խմբագրություն՝ Անձնական տվյալների պաշտպանությունը, լրագրողական նպատակով տվյալների հրապարակման առանձնահատկությունները (էթիկա), Գործակալության գործունեությունը

Քննարկումներ

Գործակալության նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ 2019թ.-ին տեղի է ունեցել թվով 19 աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ, սեմինարներ, որտեղ քննարկվել է անձնական տվյալների պաշտպանությունը, մասնավորապես.

- ԱՄՆ դեսպանատան կոմերցիոն հարցերով պատասխանատուի հետ՝ ՀՀ-ում Անձնական տվյալների պաշտպանության մակարդակի և կիբերպաշտպանության վերաբերյալ քննարկումներ
- "Սեյֆ դը չիլդրեն" և "Օքսիջեն"՝ Անձնական տվյալների պաշտպանության մասին ուսուցումների կազմակերպման վերաբերյալ
- ՊԵԿ՝ ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը լրամշակելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2 նիստ
- Համաշխարհային բանկ՝ «Հայաստանի թվային փոխարկման օրակարգ. թվային ռազմավարություն եւ տվյալների վրա հիմնված զարգացում Հայաստանում»
- ԵՄ և Կապի և տրանսպորտի նախարարություն (Մարիոթ հյուրանոց)՝ ԵՄ թվայնացում ծրագրի ներկայացում

- «Հանրային լրագրության ակումբ» ՀԿ՝ «Արդարադատությունը՝ հանուն երեխայի լավագույն շահի» թեմայով հանրային քննարկում
- Համաշխարհային բանկ՝ Թվային տնտեսության ռազմավարական գնահատման հետազոտություն
- ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն (քաղծառայողների համար)՝ Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ՝ Կանանց իրավունքների կլոր սեղան՝ Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» խորագրով
- «ՁԻԱՀի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ և «Նոր Սերունդ» ՀԿ՝ Հանդիպում-քննարկում պայմանագրի կետերի՝ ծրագրի շահառուների հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ
- «Լեգալ վեյվ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ՝ դպրոցներում երեխաների անհատական քարտերով մուտք / ելքը հսկելու վերաբերյալ քննարկումներ
- «Ազնավուր» ՀՄԴ՝ Ազնավուրի նկարները օգտագործելու վերաբերյալ հանդիպում-քննարկումներ
- ՀՀ կառավարություն՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման աշխատաժողով
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում, ԿԳՄՍ նախարարության Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության, ՀՀ ԱԳՆ-ի, ՀՀ ԱԱԾ-ի, Հայաստանի ազգային արխիվի եւ հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ՝ քննարկում Խորհրդային Միությունում 1930-1950 թվականներին ստալինյան բռնաճնշումների զոհերի հիշատակի հավերժացումն ու նրանց վերաբերող արխիվային նյութերի հանրայնացման վերաբերյալ
- ՀՀ կառավարություն՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման՝ Հաշվետվողականության և բարեվարքության ոլորտի աշխատանքային խմբի 4 հանդիպում
- «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ՝ Դատական և իրավական բարեփոխումների վերաբերյալ
- Dasaran.am
- Մամուլի ակումբ և IRZ գերմանական ծրագիր՝ ՁԼՄ-ները և անձնական տվյալների պաշտպանությունը

Ուսուցումներ

Առաջնորդվելով անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու եւ անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին տեղեկացնելու իր իրավասությամբ եւ հաշվի առնելով հանրությանը իրազեկելու, կրթելու կարեւորությունը՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը 2019թ.-ի ընթացքում տարբեր կազմակերպությունների և գերատեսչությունների հրավերով, ինչպես նաև իր նախաձեռնությամբ իրականացրել է շուրջ երեք տասնյակ ուսուցումներ: Ընդհանուր առմամբ 2019թ.-ի ընթացքում Գործակալության իրականացրած ուսուցումներին մասնակցել է շուրջ **1132** մարդ, որից՝ 400 աշակերտ, 170 ուսանող (Ամերիկյան համալսարան, ՀՊՃՀ, ԵՊՀ, ԵՊԼՀ), 140 պետական ծառայող, 115 նոտար, 112 լրագրող, մասնավոր կազմակերպության 110 աշխատակից, բժշկական հաստատությունների 60 ներկայացուցիչ, կրթական հաստատության 25 աշխատակից: Ուսուցումների հիմնական թեմաներն են.

- Երեխաների անձնական տվյալների պաշտպանության և համացանցից անվտանգ օգտվելու կանոնների վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքը և GDPR-ի հնարավոր ազդեցությունը
- Հատուկ կատեգորիայի անձնական տվյալների վերաբերյալ

- ՀԿ Անձնական տվյալների պաշտպանության և խոսքի ազատության հավասարակշռումը
- Անձնական տվյալների մշակման վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության և զգայուն անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության հիմնահարցերի վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ
- և այլն:

Աղյուսակ 4. Ուսուցումների մասնակիցները



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2019թ.-ի ընթացքում Գործակալության համար նախանշվել են այն խնդիրները, որոնք առնչվում եւ անհանգստացնում են հասարակության լայն շերտերին: Այդպիսի խնդիրները լուծելու, դրանց լուծման ճանապարհների մասին մարդկանց իրազեկելու եւ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումները կանխելու նպատակով Գործակալությունը 2019թ.-ին մշակել է ուղեցույցներ եւ կայացրել խորհրդատվական որոշումներ (փափուկ իրավունք):

- Փափուկ իրավունքի միջոցով Գործակալությունը մի կողմից կարողանում է իր դիրքորոշումները եւ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի մեկնաբանությունները հասցնել անձանց լայն շրջանակի, մյուս կողմից՝ գտնում ենք, որ ավելի լավ եւ արդյունավետ է փափուկ իրավունքի միջոցով կանխել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումները, քան հետագայում վարչական վարույթներով փորձել վերականգնել իրավունքին արդեն հասցված վնասը: Փափուկ իրավունքը նաեւ հնարավորություն է տալիս արագ արձագանքել արագ զարգացող իրականության պատճառով անձնական տվյալների պաշտպանության ոլորտում առաջացող նոր մարատահրավերներին:

«ԶԳՈՒՅՇ, ԵՐԵԽԱՆԵՐ ԵՆ»
ուղեցույց՝ երեխաների անձնական տվյալների վերաբերյալ

2019թ.-ի հունվարին Գործակալությունը հրապարակեց Զգո՛ւյշ, երեխաներ են. ուղեցույց՝ երեխաների անձնական տվյալների վերաբերյալ: Ուղեցույցում ներկայացված են.

- երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները, անձնական տվյալների պաշտպանության ոլորտում երեխաների հիմնական իրավունքները և տվյալներ մշակողների պարտականությունները
- ուսումնական հաստատություններում երեխաների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները,
- համացանցում երեխաների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները:



Ուղեցույցը մշակվել է անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության, Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից իրականացվող

ուսուցողական նյութերի, ինչպես նաեւ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ գիտագործնական մեկնաբանությունների հիման վրա և կազմվել 2018 թվականին ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) աջակցությամբ իրականացվող ‹‹Բազմաոլորտային ազգային հարթակի ուժեղացում՝ ուղղված երեխաների հանդեպ բռնությանը վերջ դնելու գործողությունների պլանավորմանը, իրագործմանը և գնահատմանը›› ծրագրի շրջանակում, որն իրականացվել է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ուղեցույցը մշակվել է այնպես եւ նաեւ այն նպատակով, որ կարողանա ծառայել որպես ուսումնական ձեռնարկ՝ երեխաներին իրենց անձնական տվյալների պաշտպանության իրավունքին ծանոթացնելու, անձնական տվյալների նկատմամբ ուշադրությունը բարձրացնելու, ինչպես նաեւ իրենց վերաբերյալ տվյալների պաշտպանությունն ինքնուրույն իրականացնել սովորեցնելու համար:

Ուղեցույցը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ https://www.unicef.org/armenia/media/2761/file հղմամբ:

ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ԻՆՉՊԵՍ ՏԵՍՆԵԼ ԻՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ Է ՀԱՎԱՔՈՒՄ INSTAGRAM-Ը ՁԵՐ ՄԱՍԻՆ

2019թ.-ի հունիսին Գործակալությունը հրապարակեց ուղեցույց՝ «Ինչպես տեսնել՝ ինչ տվյալներ է հավաքում Instagram-ը ձեր մասին» վերտառությամբ, որում ներկայացված են գործնական խորհուրդներ՝ օգնելու առավել պաշտպանված դարձնել օգտատիրոջ անձնական տվյալների մշակումը:

Սոցիալական ցանցերը օգտատերերի մասին տվյալները հավաքում են, պահում և օգտագործում: Բացառություն չէ նաև Instagram-ը: Սոցիալական ցանցը հնարավորություն է տալիս օգտատերերին տեսնել, թե ինչ տվյալներ է հավաքում օգտահաշվի մասին: Ուղեցույցը նպատակ ունի իրազեկել թե քաղաքացիները ինչպես կարող են ծանոթանալ Instagram-ի կողմից իրենց մասին հավաքագրվող տվյալներին:

Ուղեցույցը հասանելի է ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պաշտոնական ֆեյսբուքյան էջում՝ https://bit.ly/34VnFqK հղմամբ:

ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

2019թ.-ի սեպտեմբերին Գործակալությունը հրապարակեց ուղեցույց՝ անձնական տվյալների մշակումը հիշողության սարքեր պարունակող սարքավորումների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ծառայություններ մատուցողների կողմից: Ուղեցույցում Գործակալությունն անդրադարձել է հիշողության սարքեր (կոշտ սկավառակ, հիշողության դյուրակիր սարք կամ այլ տիպի հիշողության սարք) պարունակող իրենց սարքավորումների (համակարգիչ, հեռախոս, տեսախցիկ, USB ֆլեշ կրիչ եւ այլն) սարքավորումների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգում իրականացնելու դեպքերում այդ սարքավորումներում պարունակվող անձնական տվյալների անվտանգությանը: Գործակալությունը հաշվի է առել, որ նման սարքավորումների խափանման դեպքում դրանք վերանորոգման հանձնելիս մարդիկ երբեմն չեն մտահոգվում դրանցում առկա իրենց անձնական տվյալների անվտանգության մասին կամ, ինչը նույնպես հաճախ է պատահում, սարքավորման խափանումը զրկում է մարդկանց իրենց տվյալներին հասանելիությունից: Մյուս կողմից, նման սարքավորումների տեխնիկական սպասարկում եւ վերանորոգում իրականացնողները գրեթե երբեք չունեն արձանագրված կանոններ կամ քաղաքականություն իրենց վստահված սարքերում առկա տվյալների պաշտպանության ապահովման վերաբերյալ:

Ուղեցույցը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ http://moj.am/storage/uploads/Hishoxutyan-sarqer-uxecuyc.pdf հղմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2019թ.-ի հոկտեմբերին Գործակալությունը հրապարակեց պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ուղեցույց: Ուղեցույցում ներկայացված են.

- անձնական տվյալներ մշակելու հիմքը, տվյալների մշակում նախատեսելը, տվյալներ ստանալը,
- անձնական տվյալների անվտանգությունը, տվյալների օգտագործումը,
- անձնական տվյալների գաղտնիությունը,
- անձնական տվյալների փոխանցումն այլ պետական մարմիններին,
- անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատուն,
- անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստումը:

Ուղեցույցը նպատակ ունի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների հիման վրա սահմանել պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ցուցումներ, այդ թվում՝ անձնական տվյալներ մշակելու անվտանգության ապահովման միջոցների և մշակողի պարտականությունների, այլ պետական մարմիններին անձնական տվյալների փոխանցման, անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատուի,

անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ վերապատրաստման մասին:

Ուղեցույցը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ http://moj.am/storage/uploads/2019Uxecuyc-cucumner.pdf հղմամբ:

ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՔԱՅԼԵՐ, ՈՐ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ՁԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՀԵՌԱԽՈՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒՑ ԱՌԱՋ

2019թ.-ի դեկտեմբերին Գործակալությունը հրապարակեց ուղեցույց՝ «Անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված կարևոր քայլեր, որ պետք է անել ձեր օգտագործած հեռախոսը վաճառելուց առաջ» վերնագրով: Ուղեցույցում ներկայացված են գործնական խորհուրդներ՝ օգնելու առավել պաշտպանված դարձնել հաճախորդի անձնական տվյալների մշակումը, մասնավորապես.

- Backup (տվյալների կրկնօրինակում),
- չմոռանալ հեռախոսից հանել SIM քարտն ու հիշողության քարտը,
- Factory reset (հեռախոսը բերել գործարանային վիճակի):

Ուղեցույցը նպատակ ունի իրազեկել, թե ինչպես քաղաքացիները պաշտպանեն իրենց անձնական տվյալները բջջային հեռախոսները վաճառելուց առաջ, որպեսզի դրանք հասանելի չլինեն գնորդին:

Ուղեցույցը հասանելի է ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պաշտոնական ֆեյսբուքյան էջում՝ https://bit.ly/2EQOdyO հղմամբ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մշակողը մինչև կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը պարտավոր է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցել տվյալներ մշակելու մտադրության մասին»: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ծանուցումը պետք է ներառի անձնական տվյալներ մշակողի, անձնական տվյալների մշակման իրավական հիմքերի եւ նպատակների, մշակվող անձնական տվյալների շրջանակի, տվյալների սուբյեկտների շրջանակի, անձնական տվյալների մշակման ժամկետների եւ տվյալների հետ կատարվող գործողությունների, ինչպես նաեւ անձնական տվյալները մշակելու անվտանգության ապահովման

վերաբերյալ տեղեկություններ: Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ պարտադիր ծանուցում պետք է ուղարկեն բոլորը, ովքեր մինչեւ Օրենքի ընդունումն արդեն մշակել են կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ:

Ծանուցումները շարունակում են հետաքրքրություն ներկայացնել անձնական տվյալներ մշակողների համար, քանի որ, ինչպես վերևում նշվեց, բոլոր կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակողները պարտավոր են ծանուցում ներկայացնել Գործակալությանը: Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցում ներկայացնելու պարտականությունը մեկանգամյա է, ուստի Օրենքի ընդունումից հետո, ծանուցումների ամենամեծ քանակը եղել է գործունեության առաջին տարում՝ 2016-ին (1534 ծանուցում), որից հետո ծանուցումների թիվն օբյեկտիվորեն նվազել է: Այնուամենայնիվ, Գործակալությունը շարունակում է իր մոնիթորինգի արդյունքում դեռևս ծանուցում չներկայացրած տվյալներ մշակողներին իրազեկել այս պարտավորության մասին՝ համապատասխան գրություններով պահանջելով դա անել:
Արդյունքում 2019 թվականի ընթացում գործակալությունը ստացել է **83 ծանուցում՝ 35 պետական, 48 մասնավոր հիմնարկներից:**
Համեմատության համար նշենք, որ նախորդ՝ 2018-ի ծանուցումների տարեկան ցուցանիշը եղել է 37:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. 2019 թվականին Գործակալությունը շարունակել է իր աշխատանքներն Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիայի (108 Կոնվենցիա) Խորհրդատվական կոմիտեում (T-PD): Մասնավորապես, Կոմիտեի՝ 2019 թվականի հունիսի 13-14-ին եւ նոյեմբերի 19-21-ին Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում տեղի ունեցած 38-րդ եւ 39-րդ լիագումար նիստերի ընթացքում ի թիվս այլ հարցերի քննարկվել են նաեւ անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող հետեւյալ թեմաները

- 108 Կոնվենցիայի արդիականացումը (Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիան փոփոխող արձանագրությունը, որի արդյուքնում արդիականացված 108 Կոնվենցիան կոչվում է նաեւ 108+ Կոնվենցիա),
- Իրավապահ մարմինների համար տվյալների անդրսահմանային հասանելիությունը (Կիբեռհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիայի 2-րդ լրացուցիչ արձանագրության նախապատրաստումը),

- դեմքի ճանաչումը (facial recognition),
- տվյալների պաշտպանության և կրթության համակարգը,
- պրոֆիլավորման համատեքստում անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ նախարարների կոմիտեի CM/Rec(2010)13 Հանձնարարականը,
- Եվրամիության արդարադատության դատարանի եւ Մարդու իրավունքների միջ-ամերիկյան դատարանի նախադեպերը,
- Եվրոպայի խորհրդի այլ մարմինների և կառույցների հետ համագործակցությունը,
- Մարզական մրցումների մեքենայությունների մասին ԵԽ կոնվենցիան (Մաքլինգենի կոնվենցիա),
- Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում գործողությունները և հիմնական զարգացումները,
- ԵԽ անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարի գործունեությունը,
- Ստեֆանո Ռոդոտայի մրցանակաբաշխությունը:

2. 2019 թվականի հոկտեմբերի 2-ին Հայաստանը ստորագրեց Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիան (108 Կոնվենցիա) փոփոխող արձանագրությունը:

108 Կոնվենցիան անձնական տվյալների պաշտպանության ոլորտում գործող հիմնական միջազգային փաստաթղթերից է, որը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2012 թվականի սեպտեմբերի 1-ին: Միաժամանակ, Արձանագրությունը քննարկվել է Տվյալների պաշտպանության ad hoc կոմիտեի (CAHDATA) ժողովում, որն անցկացվել է 2016թ.-ի հունիսի 15-16-ին Ստրասբուրգում և հայտնի է որպես 108 կոնվենցիայի արդիականացման վերաբերյալ փաստաթուղթ կամ 108+ Կոնվենցիա: Արձանագրությունը թարմացնում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտի տերմինաբանությունը եւ նախատեսում են ի թիվս այլնի հետևյալ կարևոր փոփոխությունները.

- **փոխվում են Կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի (T-PD, որում ներկայացված է նաեւ Հայաստանը) կարգավիճակը եւ իրավազորությունները,** *մասնավորապես, Կոնվենցիայի արդիականացված տարբերակի ուժով ստեղծված Կոնվենցիայի կոմիտեն գնահատելու է Կողմ հանդիսացող պետության կողմից Կոնվենցիայով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունավետությունը՝ մասնավորապես Կոնվենցիայով նախատեսված կարգավորումները ներպետական օրենսդրության մեջ ամրագրելու տեսանկյունից:*

Յուրաքանչյուր կողմ պարտավոր է ակտիվորեն նպաստել Կոմիտեի կողմից գնահատման գործընթացի իրականացմանը: Կոմիտեն իրավունք է ունենում ուսումնասիրել անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի պահանջների կատարումը և տալ հանձնարարականներ (recommendations) Կողմին այդ պահանջների չպահպանման դեպքում: Նախկինում Կոմիտեն կարող էր ներկայացնել առաջարկություններ (proposals):

- **Կոնվենցիայի արդիականացված տարբերակը սահմանում է նաեւ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի եւ այլ իրավունքների, այդ թվում՝ արտահայտվելու ազատության իրավունքի փոխհարաբերությունները:**
- **Կոնվենցիայի արդիականացված տարբերակը առավել հստակ է սահմանում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի նկատմամբ կիրառելի չափանիշները,** *օրինակ՝ վարչական պատասխանատվության ենթարկելու իրավունքը կամ անկախությունը, որի համաձայն՝ լիազոր մարմինը պետք է իր գործառույթներն ու լիազորությունները իրականացնի միանգամայն անկախ և անկողմնակալ և այդ կապակցությամբ չպետք է ընդունի որևէ միջնորդություններ և ցուցումներ.*
- **Կոնվենցիայի արդիականացված տարբերակը առավել հստակ է սահմանում անձնական տվյալների անդրսահմանային հոսքը՝** *նախատեսելով, որ կողմ հանդիսացող պետությունը միայն անձնական տվյալների պաշտպանության (ձեւական) նպատակներով չի կարող արգելել կամ հատուկ թույլտվության թույլատրել անձնական տվյալների փոխանցումը Կոնվենցիայի անդամ այլ պետություն, սակայն կարող է արգելել կամ հատուկ թույլտվությամբ թույլատրել տվյալների փոխանցումը այլ անդամ պետություն կամ այլ անդամ պետությունից ոչ անդամ պետություն, երբ առկա է իրական և լուրջ/էական վտանգ, որ այդպիսի փոխանցումը կհանգեցնի Կոնվենցիայի դրույթների շրջանցման:*

Միաժամանակ, Արձանագրության ստորագրումը եւ վավերացումը նախատեսված է որպես Կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներով եւ ակնկալվում է, որ Հայաստանն արձանագրությունը կվավերացնի 2020 թվականին:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋ

2019թ.-ի ընթացքում Գործակալության պաշտոնական ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 53 նյութ.

- Ինչ անել հեռախոսը, համակարգիչը կամ մեկ այլ սարք նախքան վերանորոգման հանձնելը
- Ինչպես հեռախոսահամարը հեռացնել Getcontact հավելվածի բազայից
- Ադրբեջանցի հաքերների կողմից հայկական էլ. հասցեները կոտրելու վերաբերյալ
- Գործակալության հայտարարությունը (խորհրդատվությունը) աշխատողի պարգևատրման չափի մասին տեղեկությունն անձնավորված հրապարակելու վերաբերյալ
- Facebook-ի Messenger-ը ուղարկած նամակը և՛ ուղարկողի մոտից, և՛ ստացողի՝ ուղարկելուց հետո 10 րոպեների ընթացքում ջնջելու նոր հնարավորության վերաբերյալ
- Կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակողների կողմից Գործակալությանը ծանուցում ներկայացնելու պարտավորվածության վերաբերյալ
- Dasaran.am-ի կողմից աշակերտների անձնական տվյալները մշակելուց առաջ ծնողների համաձայնությունը ստանալու վերաբերյալ
- Ֆեյսբուքի՝ Android-ի ու iOS-ի հավելվածների «Location History» տվյալների վերաբերյալ
- ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) աջակցությամբ պատրաստված նոր «Զգու՛յշ, երեխաներ են» ուղեցույցի՝ երեխաների անձնական տվյալների վերաբերյալ
- Երևանի քաղաքապետի կողմից պարգևատրված աշխատակիցների ցանկը հրապարակելու վերաբերյալ վարչական վարույթով որոշման մասին
- «Երկփուլանի վավերացում» (Two-factor authentication) ֆունկցիան Ֆեյսբուքում միացնելու վերաբերյալ
- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության հայտարարությունը՝ 13-ամյա աղջկա հղիության մասին պատմող տեսանյութի տարածման վերաբերյալ
- Ինչպես տեսնել ինչ տվյալներ է հավաքում Instagram-ը Ձեր մասին
- Երևանյան նոր զբոսայգում կիսամերկ երեխայի խնդրահարույց լուսանկարի վերաբերյալ

- Ինչպես Ֆեյսբուքում կարգավորել գովազդների ցուցադրումը
- Լրատվամիջոցներում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խնդիրները՝ Գործակալության ուշադրության կենտրոնում
- Անձնական տվյալների մշակումը հիշողության սարքեր պարունակող սարքավորումների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ծառայություններ մատուցողների կողմից
- ՀԾԿՀ որոշման նախագծի քննարկումներում Գործակալության ներգրավվածության վերաբերյալ
- Օգտագործած հեռախոսը վաճառելուց առաջ անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված կարևոր քայլերի վերաբերյալ
- Ինչպես նաև մի շարք հարցազրույցներ, ելույթներ և այլն: